# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է 12000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպարային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 17-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 գնման պայմանագրում 2024 թվականի մայիսի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 25.04.2024թ. N 591-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**17.01.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 գնման պայմանագրի**

ք. Երևան «20» «05» 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝, ի դեմս տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.04.2024թ. N 591-Ն որոշումը և 12000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպարային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 17.01.2024թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Պայմանագրի 7.13 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.14 կետ.

<<7.14. Պայմանագրով նախատեսված՝ պայմանագրի արդյունքի, պայմանագրի չկատարման կամ տեխնիկական բնութագրից շեղումներով կատարման կամ ուշացումների համար հաշվարկվող տույժերի և տուգանքների դիմաց վճարումների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է ՀՀ ոստկանությունը: >>:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011042471<br>ՀՎՀՀ 01533334<br>Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝<br>_____________ Կ. Անտոնյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | <<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ<br>ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40<br><<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1930030206282300<br>ՀՎՀՀ 05547385<br>Տնօրեն՝<br>_____________ Ն. Սիրեկանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
17.01.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 գնման պայմանագրի
20 . 05 .2024 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
17.01.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 գնման պայմանագրի

### ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/1 | 12000 ազգաբնակչություն սպասարկող ոստիկանության նոր ստորաբաժանման տիպային (բազմակի կիրառման օրինակելի) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Մեղրի համայնքում դրանց տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննություն | - | - | - | - | - | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 | 1 800 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 01533334
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝

_________________ Վ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ., բն. 40
<<ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

Տնօրեն՝

_________________ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԻՆԵԿՈԲԱՆԿ

15/05/2024 № Ց 3617

**ԵՐԱՇԽԻՔ N EA24/00432**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** պայմանագրից և կնքվելիք **Համաձայնագիր N 1**-ից (այսուհետ միասին՝ Պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **230,000.00 (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** ծածկագրով կնքված պայմանագրի կնքվելիք **Համաձայնագիր N 1**-ի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **30/06/2025թ**.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ **tender4@minurban.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ **ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17** հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին **www.procurement.am** հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
**«ԿՈՄԻՏԱՍ 2» Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ** ՎԱՐԱԶԴԻԿ ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Մարիամ Կոբելյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ. (+374 10) 510 510 (5380)

ԻՆԵԿՈԲԱՆԿ

15/05/2024 № G3618

**ԵՐԱՇԽԻՔ N EA24/00433**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** պայմանագրով և կնքվելիք **Համաձայնագիր N 1**-ով (այսուհետ միասին՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **345,000.00 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև **N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12** ծածկագրով կնքված պայմանագրի կնքվելիք **Համաձայնագիր N 1**-ի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **30/06/2025թ.**-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ **ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17** հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/12 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
«ԿՈՄԻՏԱՍ 2» Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱՐԱՅԻԿ ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Մարիամ Կոբելյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ. (+374 10) 510 510 (5380)